ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1921—1925)

ԲՈՐԻՍ ԹԱՄՐԱԶՅԱՆ

Սովետական Հայաստանի նոր մտավորականության ձևավորման պատմության մեջ ուրույն տեղ ունի գյուղատնտեսական մտավորականության պատրաստման, ձևավորման և կազմավորման պատմությունը։ Նոր սոցիալիստական գյուղատնտեսական մտավորականությունը կոչված էր մեծ դեր խաղալու գյուղատնտեսության վերականգնման, գյուղում կուլտուրական հեղափոխության իրականացման, սովետական իշխանության քաղաքականության կենսագործման գործում։ Սովետական իշխանության առաջին տարիներին առաջնահերթ խնդիր էր դարձել գյուղատնտեսական հին մտավորականությանը սոցիալիզմի ոգով դաստիարակելը և նրա ներգրավումը երկրի տնտեսության վերականգնման գործին։ Դա բխում է մեր երկրում ծավալվող նոր տնտեսական քաղաքականությունից։ Հայաստանում նրա կիրառման համար կարևոր նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի ծրագրային նամակն Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի և լեռնականների հանրապետության կոմունիստներին։ Վ. Ի. Լենինը Կովկասի կոմունիստներին խորհուրդ էր տալիս տնտեսության վերականգնման աշխատանքները սկսել գյուղատնտեսությունից, «իսկույն աշխատել բարելավել գյուղացիների դրությունը և սկսել էլեկտրիֆիկացիայի, ոռոգման խոշոր աշխատանքներ»[1]։ Մինչ այդ 1920 թ. Վ. Ի. Լենինը գրում էր. «բուրժուական կուլտուրայի, բուրժուական գիտության, բուրժուական տեխնիկայի ամեն մի ներկայացուցչի պետք է գնահատել։ Առանց նրանց մենք չենք կարող կոմունիզմ կառուցել»[2]։

Վ. Ի. Լենինի պահանջներին համապատասխան Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը միջոցներ ձեռնարկեցին գյուղատնտեսական սակավաթիվ հին մտավորականությանը՝ գյուղատնտեսներին, գյուղատնտեսության ինժեներ-տեխնիկ մասնագետներին, սահմանագծող ինժեներներին, հողաչափներին և անասնաբուժական աշխատողներին սովետական իշխանության շուրջը համախմբելու, քայքայված գյուղատնտեսությունը վերականգնելու ուղղությամբ։ Հայաստանի հեղկոմի և հողժողկոմատի 1921 թ. փետրվարի 11-ի «Գյուղատնտեսության մասնագետների ցուցակագրության և մոբիլիզացիայի մասին» դեկրետի համաձայն մինչև 1921 թ. փետրվարի 25-ը հողժողկոմատի գյուղատնտեսական բաժանմունքում և տեղական հեղկոմների գյուղատնտեսական բաժիններում պետք է ցուցակագրվեին քաղաքացիական և զինվորական ծառայության մեջ գտնվող գյուղատնտեսական մասնագետները (այդ թվում՝ գյուղատնտեսները, հողաչափները, կաթնատնտեսության, շերամապահության մասնագետները, գյուղատնտեսության ինժեներ-տեխնիկ կադրերը)։ Ցուցակագրվելու էին նաև ոչ մի տեղ չաշխատող գյուղատնտեսական մասնագետները[3]։ Հայաստանի ռազմական ժողկոմը 1921 թ. մայիսի 13-ի «Անասնաբույժների, անասնաբուժակների, սանիտարների և պայտարների հաշվառքի մասին» հրամանով պա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 43, էջ 238։

2 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 40, էջ 262։

3 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական-կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 123, ց. 1, գ. 735, թ. 10։

հանջում էր նշված մասնագիտությունների ներկայացուցիչներին (բացի ռազմական ժողովրդական կոմիսարի իշխանությանը ենթակա վարչություններում, հիմնարկություններում, հաստատություններում և զորամասերում ծառայողներից) երեք օրվա ընթացքում՝ մայիսի 20-ից մինչև 22-ը ներառյալ, ըստ բնակավայրի ցուցակագրվել անասնաբուժական վարչություններում[4]։ Մինչ այդ Հայհեղկոմի հունվարի 31-ի հրամանով ցուցակագրվել էին պարենավորման գործի աշխատողները[5]։ Կարևոր էր և Հայհեղկոմի 1921 թ. փետրվարի 3-ի հրամանը՝ «Պարենավորման աշխատավորներին զորահավաքի ենթարկելու մասին»[6]։ Դեկրետների և հրամանների կատարումը պարտադիր էր նշված մասնագետների համար, իսկ խուսափողները ենթակա էին ամենախիստ պատասխանատվության։ Կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հաջողվեց որոշ չափով բավարարել գյուղատնտեսության մտավորականության պահանջները։ Այսպես, Հայաստանի հեղկոմի 1921 թ. հունվարի 23-ի որոշման համաձայն զինվորական ծառայությունից աղատվեցին գյուղատնտեսական կրթությամբ սպաները՝ գյուղատնտեսներ, տեխնիկներ, հողաչափներ[7]։ Սովետական Հայաստանը, սակայն շարունակում էր գյուղատնտեսական բարձրորակ մասնագետների սուր կարիք զգալ։ 1921 թ. Հայաստանն ուներ ընդամենը 7 գավառական, 2 գավառակային անասնաբույժ, 9 անասնաբուժակ[8]։ Գավառների մեծ մասն ապահովված չէր անասնաբուժական անձնակազմով։ 1923 թ. ՀՍՍՀ-ում կենտվիճվարչության տվյալներով մեկ անասնաբույժին 3.111 քառ. վերստ տարածություն ունեցող շրջանում ընկնում էր 126. 647 գլուխ անասուն[9]։ Մեկ անասնաբույժի համար նման քանակությամբ անասունների սպասարկումը բավական դժվար էր, այն էլ այն դեպքում, երբ անասունների մեջ տարածված էին համաճարակային բազմաթիվ հիվանդություններ, այդ թվում՝ ժանտախտ, ծաղիկ, սիբիրյան խոց և այլն։ Անասելի ծանր պայմաններում մեծ ավյունով աշխատում էին անասնաբույժներ Վ. Թորոսյանը (հողժողկոմատի անասնաբուժական վարչության պետ), Տ. Քալանթարը, Վ. Վելեժևը, Ն. Ջելենագորսկին, Վ. Միխայլիչևը, Պ. Ալեքսեևը, Ռ. Շումանը, Պ. Սլարակովը, Պ. Քալանթարյանը[10]։ Հայաստանի անասնաբուժական անձնակազմը բացի մասնագիտական աշխատանքից ներգրավվում էր նաև ժողովրդական առողջապահության բնագավառում՝ պայքարելով հատկապես գյուղերում տարածված սիբիրյան ախտի, քոսի, թոքախտի, խոլերայի և այլ վարակիչ ու տարափոխիկ հիվանդությունների դեմ[11]։ Կազմակերպվում էին անասնաբուժական ամբուլատորիաներ, որոնք համալրվում էին նոր ուժերով։ 1925 թ. ՀՍՍՀ-ում անասնաբույժների քանակը 1921 թ. համեմատությամբ ավելացրել էր ընդամենը 5-ով և դարձել 14, որից 8-ը՝ գավառական, 4-ը՝ գավառակային, 2-ը՝ քաղաքային։ Նույն ժամանակամիջոցում անասնաբուժակների քանակը կրկնապատկվել էր և հասել 18-ի[12]։ Կազմակերպվել էր 10 անասնաբուժական ամբուլատորիա[13]։ ՀՍՍՀ-ում 1925 թ. մեկ անասնաբույժին 2350 քառ. վերստ տարածքում ընկնում էր 120.000 գլուխ անասուն[14]։ Վերոհիշյալ փաստերից երևում է, որ 1921 թ. համեմատությամբ 1925 թ. մեկ անասնաբույժին ընկնող ծառայողական շրջանի տարածքը կրճատվել էր 761 քառ. վերստով, իսկ սպասարկող անասունների գլխաքանակը կրճատվել էր 26. 647 գլխով։ Սովետական Հայաս-

4 «ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 2, էջմիածին, 1921, էջ 32—33։

5 Նույն տեղում, պրակ 1, էջմիածին, 1921, էջ 118—119։

6 Նույն տեղում, էջ 110։

7 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 123, ց. 1, գ. 1, թթ. 174—176։

8 «Խորհրդային Հայաստան, հինգ տարի. 1920—1925», Երևան, 1926 թ., էջ 110։

9 Նույն տեղում, էջ 130։

10 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 123, ց. 1, գ. 3, թ. 138։

11 Նույն տեղում, գ. 294, թ. 10։

12 «Խորհրդային Հայաստան, հինգ տարի. 1920—1925», էջ 131։

13 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 123, ց. 1, գ. 627, թ. 93։

14 Նույն տեղում, թ. 89։

տանի անասնաբուժական աշխատողների կատարած հետագա աշխատանքի արդյունքն ամփոփվեց 1925 թ. մարտի 3—8-ը Երևանում կայացած ՀՍՍՀ անասնաբույժների անդրանիկ համագումարում, որտեղ զեկուցումով հանդես եկավ Վ. Բորոսյանը[15]։ Հանրապետությունում անասնաբուժական գործի բարելավման համար մշակվեցին մի շարք միջոցառումներ։ Խնդիր դրվեց բարձրացնել անասնաբուժական անձնակազմի հաստիքները, անասնաբուժական վարչությանը կից կազմակերպել անասնահամաճարակային, սանիտարական և մատակարարման բաժիններ, տեղական բնակչությունից կադրեր պատրաստելու համար անասնաբուժական ինստիտուտներում ստեղծել բավարար քանակի կրթաթոշակ։ Մշակված միջոցառումներից էր նաև տեղական բնակչությունից անասնաբուժական սանիտարներ պատրաստելու համար միամյա դասընթացներ ստեղծելը, ամեն տարի երկու անասնաբույժ կատարելագործելու նպատակով գիտական կենտրոններ գործուղելը, համաճարակի դեմ պայքարելու համար անասնաբակտերիոլոգիական ինստիտուտի ստեղծումը[16]։ Դա առավել անհրաժեշտ էր, քանի որ Հայաստանի 361 գյուղում չորս տարում ժանտախտով հիվանդացել էր 279.355 գլուխ եղջերավոր անասուն, հակաժանտախտային սրսկումներ կատարելուց հետո սատկել էր դրանց 1,5 %-ը[17]։ Սովետական Հայաստանի կառավարությունը նյութական միջոցների պակասության պատճառով այս պահանջները բավարարում էր մասնակիորեն։

Գյուղատնտես մասնագետների քանակը ՀՍՍՀ-ում ևս անբավարար էր։ 1921 թ. Հայաստանի 9 գավառներ ունեին ընդամենը 4 գյուղատնտես և 5 գյուղատնտեսական հրահանգիչ[18]։ Գյուղատնտեսների նման քանակը խիստ անբավարար էր հանրապետության գյուղատնտեսության վերականգնման աշխատանքները ծավալելու համար։ Այդ իսկ պատճառով կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը միջոցներ ձեռնարկեցին գյուղատնտես մասնագետների քանակական և որակական ցուցանիշները բարելավելու ուղղությամբ։ Հատկանշական է ՌԿԿ Կենտկոմի 1924 թ. ապրիլի շրջաբերականը, որտեղ պահանջվում էր հատուկ ուշադրություն դարձնել գավառներում աշխատող գյուղատնտեսական մտավորականության քաղաքական դաստիարակությանը, նպաստել գավառային գյուղատնտեսների համար կրկնողության դասընթացներ բացելուն, գրանցում սովետական իշխանության հողային և գյուղատնտեսական քաղաքականության պրոպագանդային[19]։ Գյուղատնտեսի հասարակական դերի աճի հարցերը լայնորեն մեկնաբանվեցին 1924 թ. մայիսին Մոսկվայում կայացած կուսակցության XIII համագումարում[20]։ Կուսակցության Կենտկոմի և համագումարի որոշումների կատարման ուղղությամբ գործնական քայլեր ձեռնարկվեցին նաև Սովետական Հայաստանում։ ՀՍՍՀ կառավարության հաշվետվության տվյալներով 1925 թ. Հայաստանում կար 9 գավառային և 19 գավառակային գյուղատնտես, գյուղատնտեսության 33 հրահանգիչ[21]։ Փաստական տվյալները ցույց են տալիս, որ վերականգնման ժամանակաշրջանի վերջում ՀՍՍՀ-ի մոտ 40 գյուղին միջին հաշվով ընկնում էր մեկ գյուղատնտես, որը պետք է սպասարկեր 29 հազար գյուղական բնակչության՝ մոտ 26 հազար դեսյատին վարելահողով, ինչն անասելի ծանր խնդիր էր։ Փոխադրամիջոցների սուր պակասի պատճառով գյուղերի որոշ մասը զուրկ էր մնում գյուղատնտես մասնագետների օգնությունից։ 1925 թ. մարտի 2-ից 7-ը Երևանում կայացավ ՀՍՍՀ գյուղատնտեսների առաջին խորհրդակցությունը։

---

15 «Գյուղատնտեսական կյանք», 1925, № 2, էջ 27—30։

16 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 1, գ. 267, թ. 97։

17 «Խորհրդային Հայաստան». 6. III. 1925։

18 «Խորհրդային Հայաստան, հինգ տարի. 1920—1925», էջ 114։

19 «Խորհրդային Հայաստան», 2. IV. 1924։

20 «ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում», հատոր երրորդ, Երևան, 1987, էջ 322—323։

21 «Խորհրդային Հայաստան, հինգ տարի. 1920—1925», էջ 114։

ՀՍՍՀ Կենտգործկոմի անունից ողջունելով խորհրդակցության մասնակիցներին, Հ. Աղատյանն ասաց. «Գյուղում մեր գյուղատնտեսները գյուղական ուսուցչի հետ միասին պիտի կազմեն այն կամուրջը, որ գյուղը միացնելու է քաղաքի հետ։ Գյուղատնտեսը գյուղական կյանքում պիտի լինի և՛ հասարակական ու քաղաքական գործիչ, և՛ տնտեսագետ, և՛ գյուղացու համար իր դերն ու օգտակարությունն այնքան անհրաժեշտ պիտի դարձնի, որ առանց նրան գյուղացին իրեն դժբախտ զգա[22]»։

Վերականգնման տարիներին Հայաստանում աշխատում էին հողաչափներ Ի. Մաղալսկին, Ա. Օդաբաշյանը, Գ. Գրիգորյանը, Խ. Միրիմանյանը, Ա. Պիվովարովը, Յա. Լեիցկին, Մ. Ջանփոլադյանը և ուրիշներ[23]։ Ժողովրդական տնտեսության վերականգնման վերջում ՀՍՍՀ-ում գյուղատնտեսական մտավորականության քանակը չէր համապատասխանում տնտեսության պահանջարկին։ 1925 թ. հունվարի 26-ին ՀՍՍՀ հողագործության ժողովրդական կոմիսարիատը հայտնում էր, որ անասնաբուժական վարչությունը կարիք ունի 31, իսկ գյուղվարչությունը՝ 33 մասնագետների[24]։

Գյուղում գյուղատնտեսական մտավորականությունն ակտիվ մասնակցում էր ագրոկուլտուր, գյուղատնտեսության քիմիացման, մեքենայացման պրոպագանդայի և կուլտուր-լուսավորական աշխատանքներին։ Առանց գյուղատնտեսության մեքենայացման և քիմիացման՝ գյուղում անհնար էր սոցիալիզմ կառուցել։ Ձեռքի ծանր աշխատանքն անարտադրողական էր և ոչ շահագրգռիչ։ Գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության բարձրացմանն ուղղված՝ մեքենայացումը և քիմիացումը կամուրջ էին ստեղծում մանրապրանքային արտադրությունից անցում կատարելու դեպի սոցիալիստական հանրային արտադրությունը։ Նորաստեղծ Սովետական Հայաստանը 1921—1925 թթ. գյուղատնտեսական գործիքներ և մեքենաներ էր ներմուծում արտասահմանից։ Շվեյցարիայից ներմուծում էին կիսաֆաբրիկատներ և տարբեր տիպի գյուղատնտեսական գործիքներ[25], շվեդական «Բալթիկ» ակցիոներական ընկերությունից ստացվում էր «Հերկուլես» և «Վիկինգ» մակնիշի հնձիչ, սերմնացան, կալսիչ, ցաքանիչ մեքենաներ և գութաններ[26]։ Կոստանդնուպոլսի «Բոսֆոր» առևտրաարդյունաբերական և տրանսպորտային ընկերությունից 1922 թ. ՀՍՍՀ-ը գնում է չեխական «Զեխոմաշին» սինդիկատի արտադրած գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ[27]։ Գյուղատնտեսական մեքենաներ Հայաստանը ստանում էր նաև Ռոստովի «Դոնսելմաշ» գործարանից[28]։ Թիֆլիսում իտալական ներկայացուցիչ Լամանիան և «Մերձավոր Արևելքի ամերիկյան օգնության կոմիտեի» ներկայացուցիչ Սմիթը ՀՍՍՀ-ին առաջարկել էին գնել գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ[29]։ Հայաստանի գյուղատնտեսական մտավորականությունը գյուղատնտեսության մեքենայացման և քիմիացման գաղափարները պրոպագանդում էր գյուղական ժողովներում, խրճիթ-ընթերցարաններում, «Գյուղատնտեսական կյանք», «Մաճկալ», «Ավանգարդ», «Խորհրդային Հայաստան» և այլ թերթերում ու ամսագրերում։ Համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի դասախոսները մամուլի միջոցով բնակչությանը պրոպագանդում էին գյուղատնտեսական գիտելիքներ, գյուղատնտեսությունը ինտենսիվ զարգացնելու, այն մեքենայացնելու և քիմիացնելու գաղափարներ։ Անվանի գիտնական Պ. Քալանթարյանը վերոհիշյալ թեմայով գրում էր գիտամասսայական գրքույկներ, հոդվածներով հանդես գալիս պար-

22 «Գյուղատնտեսական կյանք», 1925 թ., № 3, էջ 38։
23 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 123, ց. 1, գ. 90, թ. 128։
24 Նույն տեղում, գ. 190, թ. 22։
25 Նույն տեղում, գ. 18, թ. 100։
26 Նույն տեղում, գ. 797, թ. 2։
27 Նույն տեղում, թ. 41։
28 Նույն տեղում, գ. 18, թ. 48։
29 Նույն տեղում, գ. 806, թ. 38։

բերականներում։ Միջատների դեմ պայքարելու, հողը հանքային պարարտանյութերով հարստացնելու, անասուններին համաճարակային հիվանդություններից փրկելու գործում գյուղատնտեսությանն օգնության էր հասնում քիմիան։ 1925 թ. հունվարի 20-ին ՀՍՍՀ հողժողկոմատը ԺողԿոմսովետին ուղարկում է դեկրետի նախագիծ՝ «ՀՍՍՀ այգիները ֆիլոքսերայից պաշտպանելու մասին»[30]։ Հանրապետությունում քիմիական գիտության զարգացման և գյուղատնտեսության քիմիացման ակտիվ կողմնակիցներ և պրոպագանդիստներ էին քիմիկոսներ Ստ. Ղամբարյանը, Լ. Ռոտինյանցը, ագրոքիմիկոս Պ. Քալանթարյանը, բիոքիմիկոս Հ. Հովհաննիսյանը և ուրիշներ։ Նրանց առաջ քաշած գաղափարները գյուղատնտեսական արտադրության մեջ ներդնում էին գավառային գյուղատնտեսները, անասնաբույժները և գյուղատնտեսության տեխնիկ-ինժեներները։

Գյուղատնտեսության կոոպերացմանը, արտելների, կոմունաների, վարկային ընկերությունների կազմակերպմանը և սովխոզների աշխատանքներին եռանդուն աջակցություն էր ցույց տալիս Սովետական Հայաստանի գյուղատնտեսական մտավորականությունը։ Առաջին չորս սովխոզները ՀՍՍՀ-ում կազմակերպվեցին 1921 թվականին։ Նույն տարվա երկրորդ կեսին ՀՍՍՀ կառավարության մի շարք դեկրետներով կազմակերպվեցին նաև սպառողական կոոպերացիաներ, որոնց ցանցի մեջ տարեվերջին ընդգրկված էր 121 միավոր՝ նաև գյուղական վայրերում[31]։ Հայկական ՍՍՀ-ում սոցիալիստական գյուղատնտեսություն կազմակերպելու առաջին փորձերից մեկը՝ 1921—1922 թթ. ստեղծված կոմունաներն էին, որոնց կազմակերպմանը պետությունը որոշակի նյութական և կազմակերպական օգնություն էր ցույց տալիս։ Լոռու գավառի Սիսիմադան բնակավայրում (Ալավերդու մոտ) հիմնված Կարլ Մարքսի անվան կոմունայի կազմակերպիչն էր գյուղատնտեսական մտավորականության ներկայացուցիչ, կոմունիստ Ն. Հաքոբջանյանը[32]։ Կոմունաների սոցիալական կազմը բաղկացած էր հիմնականում կոմունիստներից և գյուղական ակտիվից, որոնց մեծ մասը գյուղատնտեսական և գյուղի մտավորականության մյուս խավերի ներկայացուցիչներն էին։ Սակայն նյութատեխնիկական բավարար բազա չունենալու պատճառով կոմունաները շուտով քայքայվեցին։ Հայաստանում գյուղատնտեսական կոոպերացիայի կազմակերպման ուղղությամբ նախապատրաստական աշխատանք էր կատարվում։ 1924 թ. մայիսին ՀՍՍՀ Կենտգործկոմը և ԺողԿոմսովետը դեկրետ ընդունեցին «Գյուղատնտեսական կոոպերացիաների մասին»։ Ըստ դեկրետի, գյուղատնտեսական կոոպերացիաները պետք է ընդգրկեին ոչ պակաս, քան 15 գյուղացիական տնտեսություն։ Պետությունը հովանավորում էր դրանց կազմակերպումը[33]։ 1925 թ. ՀՍՍՀ գյուղատնտեսության մեջ արդեն որոշ տեղ էին գրավում գյուղատնտեսական կոոպերացիայի պարզ ձևերն ու վարկային ընկերությունները։ Վերոհիշյալ թվականին դրանց թիվը հասել էր 147-ի[34]։ Գյուղում 60 հազար աշխատավորներ ընդգրկվել էին գյուղացիական կոոպերացիաների տարբեր օղակներում և սպառողական կոոպերացիայի մեջ[35]։ Ստեղծված սովխոզների, գյուղատնտեսական կոմունաների և արտելների աշխատանքներին օգնություն էին ցույց տալիս գյուղատնտեսական մտավորականության ներկայացուցիչները։

---

30 Նույն տեղում, գ. 893, թ. 2։

31 «Խորհրդային Հայաստան, հինգ տարի. 1920—1925», էջ 257։

32 Վ. Ն. Ղազախեցյան, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը. 1920—1929 թթ., Երևան, 1975 թ., էջ 119—121։

33 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 1, գ. 868, թթ. 3—4։

34 «ՀՍԽՀ ժողտնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», Երևան, 1927, էջ 19։

35 «Հայաստանի խորհրդայնացման 5-րդ տարեդարձը, ՀԿ(Բ)Կ Կենտկոմի ագիտրաժնի թեզիսները», Երևան, 1925, էջ 23։

Սկսվեց աշխատանք՝ անջրդի հողերի ոռոգման, ջրանցքների և ջրավազանների կառուցման ու նորոգման ուղղությամբ։ Ինչպես Վ. Ի. Լենինը սովորեցնում էր Կովկասի կոմունիստներին, «ոռոգումն ամենից ավելի է պետք և ամենից ավելի կվերաստեղծի երկիրը, կվերածնի նրան, կթաղի անցյալը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ»[36]։ Խնդիր էր դրվում ստեղծել թրանցքների, ջրամբարների, ոռոգման համակարգի լայն ցանց։ 1921 թ. սկսվեցին Գառնիրասարի, Զանգիբասարի, Կրխբուլաղի, Գոկչայի, Ապարանի, Սարդարապատի ջրային ավազանների վերանորոգման աշխատանքները[37]։ Երևանի շրջակայքի ջրմուղ կայանների անցկացման և վերականգնման աշխատանքները ղեկավարում էին հողժողկոմատի հիդրոինժեներներ Տեր-Նիկողոսովը և Կիրակոսովը[38]։ 1922 թ. մայիսի 17-ին ՀՍՍՀ հողժողկոմատը որոշում ընդունեց հողժողկոմատին կից կազմակերպել հանձնաժողով՝ Էջմիածնի հողերի ոռոգման ջրանցքի շինարարությունն ավարտելու համար։ 1922 թ. սկսվեցին Զարբախի ջրանցքի[39] և Աշտարակի ոռոգիչ ջրանցքի վերանորոգման աշխատանքները[40]։ Արխիվային բազմաթիվ փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերականգնման շրջանում Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում լայն ծավալ էին ստացել ջրաշինարարական աշխատանքները։ Կառուցվող ջրանցքներից ամենանշանավորը Շիրակի ջրանցքն էր, որի շինարարությունը սկսվեց 1922 թ. նոյեմբերին։ Ջրանցքի կառուցման աշխատանքները ղեկավարում էին ՀՍՍՀ հողժողկոմատի անդոջրտնտեսության ճարտարապետներ ու հիդրոինժեներներ Ա. Ավետյանը, Ա. Մանուչարյանը, Ա. Գասպարյանը, Ս. Օհանյանը և ուրիշներ։ Կառուցումը համաժողովրդական բնույթ էր ստացել։ 1925 թ. հունիսին տեղի ունեցավ ջրանցքի բացումը։ Շիրակի ջրանցքն ուներ 30 կմ երկարություն և պետք է ոռոգեր 10.000 հա տարածություն։

Գյուղատնտեսական ուսումնական հաստատություններում ձեռնարկվեցին աշխատանքներ՝ նաև մելիորացիայի գծով կադրեր պատրաստելու ուղղությամբ։ Այստեղ էս առաջատար դերը պատկանում էր Երևանի պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետին։ Այս ֆակուլտետի դասախոս Ա. Տեր-Պողոսյանն արժեքավոր ուսումնասիրություններ էր կատարել Հայաստանի հողերի հետազոտման բնագավառում։ Բացի այդ, իր «Հայաստանի կլադոցերները» հիդրոբիոլոգիական բնույթի աշխատության մեջ անվանի գիտնականը ուսումնասիրել էր քաղցրահամ ջրերի ֆաունան։ Ա. Տեր-Պողոսյանը գյուղատնտեսական ֆակուլտետի մյուս դասախոսների հետ միասին նշանակալի աշխատանք էր կատարել հիդրոբիոլոգների և հիդրոինժեներների պատրաստման գործում[41]։ Համալսարանի տեխնիկական ֆակուլտետը նույնպես ջրաշինարարական աշխատանքների համար պատրաստում էր ինժեներներ և ճարտարապետներ։ Ջրանցքների կառուցման շնորհիվ ՀՍՍՀ-ում ցանքատարածությունները կազմեցին նախապատերազմյան մակարդակի 85,5 %-ը, իսկ 1918 թ. համեմատությամբ ավելացան 3,5 անգամ[42]։

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին ՀՍՍՀ գյուղատնտեսական մտավորականության կենսամակարդակում կատարվեցին որոշակի փոփոխություններ։ Սովետական իշխանության հաղթանակից հետո միջոցների պակասության պատճառով նորաստեղծ պետությունն ի վիճակի չէր լիո-

---

36 Վ. Ի. Լենին, Նկտ, հ. 43, էջ 239։

37 ՀՍՍՀ ՀՊԿԱ, ֆ. 123, ց. 1, գ. 1558, թ. 16։

38 Նույն տեղում, գ. 18, թ. 225։

39 Նույն տեղում, գ. 1556, թթ. 1—2։

40 Նույն տեղում, թ. 8։

41 Լ. Պ. Ղարիբջանյան, Երևանի պետական համալսարանը (1920—1930 թթ.), Երևան, 1965, էջ 175։

42 «Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода», Ереван, 1927, с. 27.

վին ապահովելու գյուղատնտեսական մտավորականության տնտեսական-կենցաղային պահանջները։ Հայաստանում անասունների մեջ տարածված համաճարակային հիվանդությունների դեմ պայքարելու համար անասնաբուժական անձնակազմը 1921 թ. վերջերին հնարավորություն չուներ ղնալու վտանգված շրջանները, քանի որ զուրկ էր փոխադրական միջոցներից, գյուղերում չուներ բնակարան և այլն։ Կառավարությունը միջոցներ էր ձեռնարկում նման իրավիճակը փոխելու համար։ Արդեն 1922 թ. սեպտեմբերին ՀՍՍՀ-ում անասնաբույժները ստանում էին ամսական 60 ռուբլի, իսկ անասնաբուժակները՝ 30 ռուբլի[43]։ 1924 թ. հոկտեմբերի 1-ից գավառային անասնաբուժական անձնակազմի մատակարարումը դրվեց տեղական գավգործկոմների իրավասության տակ[44]։ 1922 թ. վերջերին գյուղատնտեսների կենսամակարդակը դգալիորեն բարելավվեց։ Բարձրագույն կրթությամբ գավառային գյուղատնտեսն արդեն 1922 թ. վերջին ստանում էր ամսական 60 ռուբլի, իսկ միջնակարգ կրթությամբ գավառային գյուղատնտեսը՝ ամսական 50 ռուբլի։ Միջնակարգ կրթությամբ գավառային գյուղատնտեսական հրահանգիչը նույն ժամանակ ստանում էր ամսական 40, իսկ հողաչափը՝ 45 ռուբլի[45]։ 1924 թ. գավառային գյուղատնտեսական անձնակազմի մատակարարումը ևս դրվեց գավգործկոմների վրա[46]։ Սակայն տեղերում շատ դեպքերում մասնագետների աշխատավարձը ժամանակին չէին վճարում, չէին ապահովում առաջին անհրաժեշտության ապրանքներով։ Դրա պատճառը մի կողմից երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ցածր մակարդակն էր, նյութական բարիքների պակասությունը, իսկ մյուս կողմից՝ համապատասխան հիմնարկներում աշխատող անձանց սուբյեկտիվ, սխալ վերաբերմունքը նշված գործի նկատմամբ։

Հեղափոխության հաղթանակից հետո Հայաստանում զարգացում ապրեց նաև գյուղատնտեսական կրթությունը։ Նորաստեղծ Սովետական Հայաստանի կառավարությունը ելնելով երկրի գյուղատնտեսության զարգացման շահերից, աշխատում էր զարկ տալ գյուղատնտեսական կրթության զարգացմանը և առաջին հերթին բացել բարձրագույն գյուղատնտեսական ուսուցման օջախներ։ Այդ նպատակով 1921 թ. նոյեմբերին Երևանի ժողովրդական համալսարանի բնագիտական ֆակուլտետի բաղայի վրա հիմնադրվեց գյուղատնտեսական ֆակուլտետը։ Այնտեղ 1921—1922 ուսումնական տարում սովորում էր 53 ուսանող (46 տղա, 7 աղջիկ)[47]։ Գյուղատնտեսական ֆակուլտետի կազմակերպման գործում նշանակալի դեր խաղաց նրա առաջին դեկան, ագրոքիմիկոս-միկրոբիոլոգ Պ. Քալանթարյանը։ Ֆակուլտետի առաջին դասախոսներից էին այգեգործ Գ. Գրձելյանը, կաթնատնտեսության մասնագետ Ս. Աբովյանը, երկրագործ Մ. Թումանյանը, կենսաբան Ա. Տեր-Պողոսյանը, բուսաբանության և անատոմիայի մասնագետ Հ. Բեգելյանը, բիոքիմիկոս Հ. Հովհաննիսյանը, ֆիզիոլոգ Տ. Մուշեղյանը և ուրիշներ։ Երևանի համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը 1924—1925 ուսումնական տարում տվեց իր առաջին՝ 29 շրջանավարտները, իսկ հաջորդ տարում՝ 30, որոնք ուղարկվեցին գյուղական վայրերում աշխատելու[48]։

Միջնակարգ կրթությամբ գյուղատնտեսական մասնագետներ պատրաստելու համար 1922 թ. Օշականում և Լենինականում կազմակերպվեցին գյուղատնտեսական տեխնիկումներ։ Լենինականում այն կազմում էր ինդուստրիալ տեխնիկումի մի բաժանմունքը։ Օշականի գյուղատնտեսական տեխնիկումը միջոցների, գույքի, մասնագետների և համապատասխան աշակերտական կազմի պակասության պատճառով 1923—1924 ուսումնական տարվա սկզբից վե-

---

43 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 1, գ. 36, թ. 68։

44 Նույն տեղում, գ. 627։ թ. 89։

45 Նույն տեղում, գ. 74, թ. 9։

46 «Խորհրդային Հայաստան», 1. VI. 1924։

47 Լ. Պ. Ղարիբջանյան, նշվ. աշխ., էջ 53։

48 Նույն տեղում, էջ 84։

բաժվեց գյուղատնտեսական տարրական երեքամյա դպրոցի։ Երևանում ևս բացվեց գյուղատնտեսական տեխնիկում, որտեղ 1925 թ. սովորում էր 77 ուսանող։ Իսկ Լենինականում ինդուստրիալ տեխնիկումի գյուղատնտեսական բաժանմունքում նշված ժամանակ սովորում էր 23 ուսանող[49]։

Բնակչությանը տարրական գիտելիքներ ուսուցանելու համար 1923—1924 ուսումնական տարվանից Սովետական Հայաստանում բացվեցին տարրական գյուղատնտեսական դպրոցներ։ 1926 թ. հունվարի 1-ին նշված դպրոցների թիվը հասավ 11-ի, որից 1-ը պատկանում էր Ամերկոմին։ Գյուղատնտեսական այդ դպրոցներում սովորում էր 1236 մարդ[50]։ Գյուղատնտեսական մասնագետներ պատրաստվում էին նաև կարճաժամկետ դասընթացների միջոցով, ինչպես նաև ՍՍՀՄ գյուղատնտեսական և անասնաբուժական ԲՈՒՀ-երն ուսանողներ գործուղելով։

Այսպիսով, ուսումնասիրվող ժամանակաշրջանում ՀԿ(բ)Կ և Սովետական Հայաստանի կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հանրապետության գյուղատնտեսական հին մտավորականության ներկայացուցիչները մոբիլիզացվեցին և ներքաշվեցին ստեղծարար աշխատանքներում։ Միաժամանակ կատարվեցին առաջին քայլերը գյուղատնտեսական նոր մտավորականության պատրաստման ուղղությամբ։ Գյուղատնտեսական մտավորականության կողմից աշխատավոր գյուղացիությանը ցույց տրվող բազմակողմանի օգնության և աշխատանքի շնորհիվ գյուղի սոցիալ-տնտեսական կյանքն աստիճանաբար փոխվում էր։

ИЗ ИСТОРИИ ФОРМИРОВАНИЯ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОЙ ИНТЕЛЛИГЕНЦИИ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ (1921—1925)

БОРИС ТАМРАЗЯН

Резюме

Мобилизация дореволюционной сельскохозяйственной интеллигенции в период восстановления народного хозяйства и вопрос формирования новой социалистической интеллигенции находились в центре внимания КП(б) Армении. Благодаря последовательной политике партии удалось мобилизовать старую, дореволюционную интеллигенцию, вовлечь ее в социально-экономическую, общественно-политическую и культурную жизнь села. Большинство из них сыграло существенную роль на селе в деле восстановления экономики и подготовки новой интеллигенции, стало инициаторами многих починов. Представители сельскохозяйственной интеллигенции в условиях нэпа содействовали упрочению союза трудового крестьянства и рабочего класса.

49 «ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութեր, մարտ 1925 թ.—հունվար 1927 թ., Երևան, 1927, էջ 95։

50 Նույն տեղում։